Եւյ՛, այս հոգեւոր աղքիւրը, որ է ծշմարվու հաւատըր,
ամեն միսիթարութիւններով և տուրբ ուրախութիւննե-
րով կըլեցընէ այսօր իմ հոգիս, որ պրտաքին միսիթա-
րութիւններէն, և լնկերացին կինաց զուալիճութիւններէն
զրկուած է :

Ենհարդաբնակ տնտառը ջրջապատող ահսելի ժայ-
տերը քննելով, որոնք հազարաւոր տարիներէ ի վեր դա-
րբերուն և մըրիիներուն զեմ զրած են, Յիսուսի այս
խօսքերը կը միշերի թէ «Ո՞վ որ իմ խօսքերուս ականջ
կը դնէ և անոնց կը հետեի, կը նմանի այն մարդուն,
որ իւր տուալ ժայռերուն վույ կը շնէ : Ես ալ քո-
խօսքերուդ վույ իմ փրկութեանս հիմերը պիտի զնեմ,
որպէսզի ժայռերուն պէս հաստատ ըլլան» :

Փուշերը և տատակինեղն անդամ կարեւոր դասեր
կը մատակարարեին իրեն . «Եթէ ասոնք խաղող իսմ
ուրիշ ընտիր պտուղներ բերկին, կ'ըսէր, ինձ աւելի հա-
ճելի և աւելի զգտակար պիտի ըլլային . բայց Յիսուսի
խօսքին համեմատ՝ անկարելի է փուշերէն իսղող և տա-
տառիներէն թուզ քաղել . քանզի բարի ծառը բարի
պտուղ կուտացիսկ անորիտան ծառը անպիտան պտուղ :
Ուրեմն աշխատիմ ես ալ բարի ծառի մը նմանիլ և
կըցածիս չափ բարիք ընել : Չեմ ուզեր երեք նմանիլ

փուշերու մետատասկներու, որոնք բարի պառալ չեն
տար և վերատրելն զառ ուղիւ բան չեն ըներ”:

Ահա այսպէս բնութեան հրաշալեաց վրայ սքանչա-
ռալով, անոնց վրայ բարեպաջտ խորհրդածովմիւնքոր կը-
ներ և իւր ժամանակը կ'անցըներ, բայց ո՛չ գարնան ա-
րեւը, և ոչ նոյն իսկ գարունը իւր ծաղըներով և թըռ-
չուներովք այս անապատին մէջ իրեն այնչափ քաղըր և
այնչափ կրիւական երեցաւ, որւահի իւր որդւոյն ներկա-
յութիւնը և դաստիարակութիւնը”:

Ուեն օդը—գեղեցիկ օրեղը իւր զաւակը զրկած դուրս
կ'ելներ, ու քարայրին տռաջնը կը պարաւեր դորովանք
անոր հետ խօսեղով, թէե այն չեր կրնար տակաւին իւր
խօսքերը հասկընալ, և եթէ իրու ի պատասխան՝ մանուկը
իւր փոքր բացովները ժամփով մը մերը կ'եղինցըներ, այս
քաղըր ժափար բազըր անտառը կը քքեղացըներ, և իւր
բոլորփըր եղած տիրովմիւնը կը զուարձացըներ. այն ա-
տեն կինը ծնկան վրայ զալով կը սեր. “**ՎՎ Տեր,** որ-
ջափ զնորհակալ ըլլամ առ սիրելի զաւակս ինձ քաշխե-
լուդ համար՝ քիւ ե. այս դժնդակ քնակութեան մէջ
ամեն օր ինձ ուրախութիւն, միտթարովմիւն և դուր-
ժալի զբաղմաներ կուտայ: **ՎՎ Երկնային Հայր,** բա-
րեհածե զայն օրհնելու, մեծորնելու և երջանկացընելու:

ՎՎ, ինչպէս զորովուն են անոր անոր աչքելը, ինչպէս
անոր գեղին ճակատը ոսկեղոյն խոպոպիքներով զարդար-
ուած է, և ինչպէս յատահ են անոր վարդագոյն այտերը,
ոչ, ինչ հանգարութեամբ կուրծքիս վրայ կը հանգի,
շատ իրաւամբ քրիփը այն խօսքը ըսաւ թէ. Եթէ այս

փոքր մանկանց չնմանիք, երինից արքայութիւնը պիտի
չկարենաք մոնել: **Ուշափ ցանկալի էր որ աշխարհիս**
մարդիկը այս անմեղ մանկան պէս հպարտութենէն, նա-
խանձութենէ, ոխակալութենէ և ամեն տեսակ վնասա-
կար մղութիւններէ աղատ ըլլային. այն ատեն ստուգիւ
արքայութիւնը մեր սրտերուն մեջ պիտի ունենայինք.
այն ատեն այս մանկան իւր մօրը կուրծքին վրայ եղածին
պէս մենք ալ աշխարհիս մեջ երջանիկ կեանք մը պիտի
ունենայինք”:

Հատ անդամ եկեղեցի երթալու մեծ իղչ մը կը զ-
գար. “**Ի՞նչպէս երջանիկ են անոնք, կըսեր,** որ անթիւ
հաւատացերոյ բազմովմեան հետ կը միանան և եկեղեցի
կերթան: **Աստուծոյ խօսքը լսելու համար:** **ՎՎ,** եթէ զ-
անդամին ձայնը միայն առնուի, ստուգիւ ինքնինքս եր-
ջանիկ պիտի սեղպէի: **Ապայն, կրկնեց,** համայն բնու-
թիւնը երկիրը և երկիրը նոյնպէս քու տաճարդ են,
ոչ! **Աստուծ,** և զքեղ սիրող ու փափառդ սիրոց
քու սեղանդ: **Ապենն այս ժայռուտ անապատը թող**
քեզ նուիրուած իմ տաճարս ըլլայ և իմ սիրոս անոր
սեղանդ”:

Չմեռ երբ չեր կրնար դուրս ելնել, քարայրին մէջ
փոքր խաչին առջնը ծնկան վրայ կ'ուզար և աղոթք կընել,



ՊԱՇՏՈՒԹ ՀԱՅ

ՅԱ-ԱԷՐՆ ԴԱՍՏՐԵԱՅՏԻ-ԸՆ-ՆԸ :

Յանչպէս որ եղբեմն փուշերու և վայրի խոտերու մէջ գեղեցիկ ծաղիկ մը կը գտնուի , այսպէս և Ժ.Է.Ր.Վ.Ե.Վ. գաղտակ այս առանձնութեան մէջ հրեշտակային գեղեց- կութեամբ կը մեծնար ու կը զարգանար , թէև միայն խոտերով , արմատներով , կաթով և ջրով կը սնաներ , և իւր զգեստը այծեամի մորթէ եր , զոր մայրը որ մը աղուեսի մը բերանեն յափշտակեր եր :

Իւր իմացականութիւնը քիչ քիչ տարածուելով՝ սկսաւ առարկաները ճանշնալ մօրը խօսքերը հասկընալ և զանոնիք կրկնել :

Ժ.Է.Ր.Վ.Ե.Վ. որ երկար ատենէ ի վեր մարդկային ձայն մը լսած չեր , չափազանց ուրախութիւն մը զդաց երր ա- ռաջին անգամ անոր խօսիլը լսեց . այն ատեն ժամերով անոր հետ կը խօսէր , ու քիչ ժամանակի մէջ քարայ- րին և ձորակին մէջ եղած առարկաներուն անունները սորվեցուց , այնպէս որ անոր վրայ փոքր խօսակցութիւն- ներ ընելու կարող եղան :

Յաւակին իմացականութեան զարդացումը և իւր մայ- րական սիրոյն առաջին զգացումները Ժ.Է.Ր.Վ.Ե.Վ. ան- պատմելի ուրախութիւն մը պատմառեցին , և ամեն օր այսպիսի նորանոր զուարձութիւններ զգալով՝ ձմեռուածն

ամենէն իմաստ օրերը իրեն համար քաղցրութեամբ անցան :

Չմեռւան վերջերը՝ Յաւակ հրւանդացաւ և եր- կապ ատեն շըրցաւ քարայրէն դուրս ենել : Իսկ զար- նան սկիզբները առաջնապավ , գեղեցիկ տուտու մը՝ Ժ.Է.- Կրվիեկ զայն փոքր ձորակը տարաւ :

Յաւակ իւր խելքը բացուելէն ի վեր առաջին ան- գամ գարնան զեղեցկութիւնը սեննելով՝ այս երեսոյթը իրեն մեծ տպաւորաթիւն ըրաւ . ուստի բնութեան գե- ղեցկութեան վրայ զմայելով՝ յանկարծ կեցաւ և աչքը իւր բոլորափը շըջելով , “Ո՞ւայր իմ , ըստու , այսօր ամեն բան փոխուած կը տեսնեմ , ամեն բան առաջուանէ ա- ռելի գեղեցիկ է : Այս անտառը ձիւնով պատած էր և այսօր այնպէս կանանչազարդ գեղեցկացած է , որ եղեւին- ները անոնց քովը սև կերելին , թուփերն ու ծառերը , որոնք ասկէ առաջ մերկ են , և հազիւ քանի մը դեղ- նած տերևներ ունեին , հիմա քնիքուշ և կանանչ տերե- ներով ծածկուած են : Եւրեւր աւելի պայծառ կ'երեւի և ջերմութիւն մը կը տարածէ ամեն կողմէ : Գրետինը , նայէ , մայր իմ , որքափ գեղեցիկ գոյնզրոյն անթիւ ծա- զեկներ բուասծ են : Ճապա այս հեշտապար ձայնեցը ինչ են , որոնք ոստեղուն մէջ և թուփերուն տակը կը լսուին - եկու տեսնենք՝ ոսպկից կ'ելնեն այս ձայնեցը , եկու , մայր իմ” :

Ժ.Է.Ր.Վ.Ե.Վ. մամուռով պատած և դեղին ովիներէ հովանացած ժայոի մը վրայ նստաւ , իւր զաւակն ալ ծնկացը վրայ նստեցուց , և ձմեռուածն մէջ ու գարնան առջի օրերը բրածին պէս՝ քանի մը բուռ վայրի տուն-

52

կերու հունտեր նետեց իւր առջելը : Անմիջապէս բազ-
մարիւ թռչուներ ելան հոն ժողվուեցան զանոնք ու-
տելու : "Ահա այս թռչուներն են, ըստ մայրը, որ
այնպէս հոշտալի կերպով կերպեն :

— Ու փոքրիկ գեղեցիկ արարածներ, պոռաց մա-
նուկը ուրախութենէն յակատակուելով, այնպէս ներդաշ-
նակատր երգողը դուք եք, ոչ, այո, ձեր ձայնը ագ-
ռավերուն ձայնէն աւելի քաղցր է, որոնք ձմեռուան
մէջ այսպիսի տիսուր կերպով կը կանչեն, և դուք ա-
նոնցմէ աւելի գեղեցիկ եք : Իսայց ըստ ինձ, մայր իմ, ինչ
է պատճառը որ բնութիւնը այսպէս գեղեցիկ է այսօր .
այս ամեն հրաշալի բաները ովհ հոս ամփոփեց . չեմ կար-
ծեր որ հիւանդութեանս ժամանակ դուն: զարդարած ըւ-
լաս այս անտառը . քանզի վայրկեան մը քովէն շզատ-
ուեցար, ասկէ զատ չեմ կարծեր որ դուն կարող ըլլաս
ասոնք ընելու :

— Ու, սիրելի զաւակո, ես կարող չեմ բան մը
չկեց, պատախանեց մայրը, կը յիշե՞ս՝ արդի՞ս ըսի քեզ
ի՞ւ մենք երկնային շայր մը ունինք, որ արել, լուսինը
և ասուղները ստեղծեց, նոյն հայրենիս է որ այս ամեն
տեսածներդ զարդարեց՝ որպէս զի մենք զուարժանանք :

— Ուս, ինպէս բարի և ճարտար է մեր երկնային
ձայրը, ըստ Յաւակի :

Այս ատեն Ժենըվեկը սորվեցուց անոր թէ ինպէս
Աստուած աշխարհս ստեղծեց, և թէ Աստուած է մի-
այն բացարձակ Տեր և իջևան տիեզերաց . առանց անոր
հրամանին տերք մը անդամ չըարժիր, ու մեր սիրույթը

համար տմեն բան առաջուց հոգացած է, և մենք պար-
տիմք ամեն ժամանակ սիրել, պաշտել և փառաբանել
զանց :

Հետեւեալ առատու՝ Յաւակ զան խիստ կանուխ ար-
թընցուց, որպէս զի երթան տեսնեն թէ Աստուած նոյն
գիշերը ուրիշ ինչ ըրաւ . Ժենըվեկը ժայռերուն մէջ
սեղը ելակներ տեսնելով ևս որդւոյն ցույցուց որ հա-
սածները ժողվէն : Յաւակ անոնցմէ իւր մօրը տուաւ և
ինքն ալ կերաւ : "Ո՛հ, ի՞նչպէս բարի է աստուած, ը-
ստ, որ մեզ այսպիսի ախորժելի պտուղները կուտայ :

— Այս, զաւակո, բայց մի մոռնար անոր շնորհա-
կալ ըլլալու:"

Այս ատեն Յաւակ ծնկան վրայ զալով և իւր նայ-
ուածքը գեպ ՚ի երկնայ վերցընելով ըստ . "Ենորհակալ
եմ, բարի աստուած, օրհոնեալ ըլլայ անոնցդ որ մեզ
այսպիսի աշլոր եղակներ տուիր որ ուտենք" :

Այս ըսելով դարձաւ իւր մօրը հարցաց . "Արդեօք
Աստուած լեց իմ խօսքերս, մայր իմ" :

— Այս, անջուշտ, պատախանեց մայրը ժպտելով,
ու զայն իւր զրկացը մէջ սեղմելով, մօրէտ անցած խոր-
հուգույներն անզամ գիտէ : Աստուած ամեն բան կը տես-
նէ, կը լսե և գիտէ :

Յաւակ ամեն օր կ'ուզեր որ մայրը զինքը փոքր ձո-
րակը տանի որ հօն զբօնուն և խօսակցին :

Հետեւեալ իրիկունը անձրե դպով, նոր տերեւներ
և ծաղկեներ բացուեր են . Յաւակ մեծ ուրախութեամբ
իւր մօրը քովը վազելով . "Մայր իմ, ըստ, ինչ

պէս նոր ծաղկներ բացուեր են այս իրիկուն , բաց այս կոկոնն ալ նայէ , կերպի թէ աստուած այս գիշեր ժամանակ չէ ունեցեր զայն լինցընելու :

— Աչ , զաւակս , պատասխանեց Ժէնըվիկ , աստուած ամենակարող է . մէկ վայրիթանի մէջ կրնայ բոլոր անտառը ծաղկեցնել և չորցընել :

— Բայց ըսէ ինձ , կրնեց Յաւակ , ինչպէս Վասուած մութ տեղը և առանց ծրագի կրցաւ աշխատիլ :

— Վասուած ծրագի հարկաւորութիւն չունի , ցոյրեկուան պէս զիշերն ալ կը տեսնէ , ու մինչեւ ամենածածուկ և անթափանց տեղեղը պահուած գաղտնի բաներն ալ կը տեսնէ :

Ռուտու մը Յաւակի ուրախութեամբ մօրը քովը վաղելով՝ ըստու . “ Ո՞այր իմ , եկու հետո որ խիստ գեղեցիկ բան մը ցուցընեմ քեզ ” ; Եւ մօրը ձեռքէն քաշելով մացառներուն քովը տարաւ . “ Եայէ , մայր իմ , այս փշալից մացառներուն ներսը շնուած գեղեցիկ բան մը կայ ” :

— Թառչումի բայն է այն , զաւակս , պատասխանեց Ժէնըվիկ . ինչպէս որ բնակիլու Տամար մենք քարայր մը ունինք , թռչուններն ալ բայն ունին , որ խիստ ճարտարութեամբ շնուած է : Աշջը նայէ , կրնեց Ժէնըվիկ զաւակը վերցընելով , թռչնիկները կը տեսնէն , դեռ ոչ փետուո ունին , ոչ կրնան թռչիլ և ոչ բայնէն դուրս ենել ” :

— Ի՞նչպէս զեշեցիկ և քնքուշ փոքրիկ թռչուններ են : Բայց ըսէ ինձ , մայր իմ , միթէ ցուրտէ և անօթութենէ շեն վնասուիր :

— Աչ , սիրելի զաւակս , բարերարն Վասուած զանոնիր պատսպարելու համար հոգ տարած է : Բայնին մէջը մամուռներով և տունիերու փափուկ աղուամազով պատած է , որպէս զի թռչնիկները տաքնան և հանդիսարլան , բայնը կլոր ձև մը ունի , որպէս զի ասդիս անդին զարդուելով վնասուիրն : Տես ինչ ճարտարութեամբ այս թռչնիկներուն հայրն ու մայրը այս զարմանալի բոյնը շենած են , որուն նմանը մենք չենք կրնար շինել : Վասուած սորվեցուցած է անոնց որ իրենց ձագերուն պահպանութեանը համար բոյն շինեն : Գիշերը , առուս և իրիկոն օգը զովանալուն պէս՝ մայրը կը վաղե կուզգայ , և իւր թեւելը անոնց վրայ տարածելով բոյնին մէջ կը նստի , որպէսզի ցուրտէն զանոնք պատսպարէ : Վայ մացառներուն փուշերն անգամ իրենց ծառայութիւն կլումատուցանեն . վասն զի վատ և որկրամոլ ագռաւները զանոնք ուտեղը համար եկած ժամանակնին փուչերէն կ'արդելուն և մեն կրնար անոնց մօտենալ : Բայց այս թռչնիկներուն մայրը խիստ փոքր ըլլալուն՝ առանց վիրաւորուելու դիւրութեամբ փուչերու մէջէն կ'անցնի : Աը տեսնին , սիրելի զաւակս , թռչուններն մէջ ամեն բան , փուշերն անգամ , աստուծոյ քարութիւնը և նախախնամութիւնը կը յայտնեն ” :

Ժէնըվիկ իւր խօսքը դեռ լինցուցած չէր , երբ թռչնիկներուն մայրը թռչելով մացառներուն մէջ մտաւ և բայնին ծայրը կեցաւ : Վասիթապէս բոլոր ձագերը գըլուխնին վերցուցին և ծուռուղելով կտուցնին բայցին , ու մայրերնին անոնց ուտեղը տուաւ : Վասնը տեսնելով Յաւակի ուրախութենէ , կը ցատկէր :

Ճողվեր ու իւր մօրը կը տանէր զանոնք , և իրենց մերկ քարայրը խղունջներով , խեցեմորթներով և փայլուն քարելով կը զարդարեր :

Ղնոսթեան խրաբանչեր հրաշալիքը Յաւակին մեծ տպատրութիւն կըներ . ծաղիկներուն բացուիլը , պառուշներուն աստիճանաբար հասուննալը , թռչուններուն մեծնալը , արեւուն ծափիլը , վախճանիլը , ծիածանին երեւիլը իւր զարմանքը կը զրաւեին , և շատ անգամ Յաւակի իւր մայրը կը կանչեր որ իւր հետր բնութեան վրայ զբայիլ , ու երկուքնին միատեղ ամենակարողին շնորհակալ կը լային որ իրենց համար պնդափ բաներ սոեղծեր եր:

Ճակարվել իւր որդոցն այնպէս մեծնալը տեսնելով , ուրախութեան արտասուզ կը թափեր և կըտեր , “Ո՛՛ Տէր , անմեղ սիրով թէւ անապատին մէջ ըլլայ , արքայութեան մէջ կը կարծէ զինըր , և զքեզ սիրով ու միջտ իւր սրախն մէջ ունեցող անձը գիբաղդութեանց և վորձութեակց մէջ իսկ երկուային երջանիւթիւն որ կը զգայ” :

Ճակարվել զգաշացոց իւր զաւակը այս կողմերը առատութեամբ գտնուած թիւնալի տունկերէն , որոնք խիստ փայլուն և զեղեցիկ զյուեր ունեին : և պատուիրեց որ առանց իրեն ցազութելու՝ բան մը չուտե : Ո՞րվեցոց անոր նմանապէս անհնազանդութեան , յամառութեան , անձնահաճութեան և որկրամըլութեան վոտնգները : “Ե՞ս պակասութիւնները . կըսեր : թռունառոր տռակիթերէն առելի վտանգաւոր են , մեղքը շատ անգամ այս տռակերուն կը նմանի , որոնք փայլուն իերեին , բայց առնց գործաւ

“Ճուշիկները , կրկնեց Ճակարվել , իրենց ուտեիլիքը հոգալու անկարող ըլլալով , մայրենին իրենց կը բերէ . Գրթէ թերած հունտերը մեծ և կարծր ըլլան , մայրը զանոնք կը փշուէ , իւր քերանին մէջ կը կակլցնէ ու այնպէս կուտայ : Ո՞րթէ Ըստուծոյ այս կարգադրութիւնը զարմանալի չէ աստուած իւր բոլոր արարածոց . մինչեւ ամենափոքր թաշոց պէտք եղածը նախախնամութեամբ առաջուց հօգացած է . նոյն նախախնամութիւնը մեր վրայ ալ ունի , այս , սիրատուն զաւակն , մինչեւ այս վայրկինիս զքեզ ամեն վտանգներէ ազատեց , և միշտ պիտի պահպանէ” :

— Ե՞ս , մայր իմ , բարի Յաստուած զմեզ մինչեւ ցայսօր ինամեց , ու զիս ալ տուառ որ սիրես . այս՝ առոյդ զիտեմ որ այս թուշունին իւր ձագերը սիրելէն աւելի զիս կը սիրես . առանց քեզք . ես շատունց կորսուած եմ” : Ե՞ս ըսելը իւր մօրը պարանոցը վիաթթուեցաւ :

Յաւակ ամեն օր նորանոր բաներ կը գտներ իւր մօրը ցուցընկըլու և անոնց վրայ հարցումներ ընելու , և ուշումնեու մօրը միակ հոգը անոր դաստիարակութիւնն երա և Յաւակ զբաննելու համար տղայական խաղալիք մը չուներ և ու ընկեր մը , որ իւր երջանիկ կետանըր խանգարեր ուստի իւր իմացականութիւնը քիշ ժամանակի մէջ մեծ յառաջադիմութիւն տացաւ : Յաւակ իւր մօրը վրայ չափազանց սեր ուներ , ամեն առառա ամենազեղեցիցիկ ծագիկներ ժողվելով փունջ մը կը շներ , և իւր ձեռքը եղեկով հրասած գեղեցիկ փաքր կոլովներու մէջ ելակներ , վայըի մօրմենիներ և ուշից վայըի պառակներ կը

Ճութինը մահացու է : Այս, շատ անդամ չարութինը
բարիք գործելէն, աւելի մեր սիրտը կը գրաւէ և մեր միտ-
քը կը հրապուրէ, բայց պէտք է զգուշանալ Վատուծոյ
կամաց դէմ գործելէն” :



Ֆ Ա Ռ Ի Թ Ծ Ա Յ

Չէւոց անդամին մէջ :

Այս անմեղ զբոսանքներով դարունը և ամառը ան-
ցուցին ու աջոնը եկաւ . երկնից երեսը զրեթէ միշտ խիտ
և տիսուր ամպերով ծածկուած եր, երկիրը նոր բան մը
չէր բռւսներ, թռչունները իրենց երդերը դադրեցու-
ցեր, և անոնցմէ շատերը՝ այն կողմերէն հեռացեիր եին,
ծաղիկները կը թառամենին ու կոյնչանային, և տերե-
ները դեղներով բնինին կիյնային և կամ ցրտաքունչ հաղ-

մերուն սաստկաբթենեն դիւրուտար կը մային :

Ժենը վեճով ձմեռուան մօտենալուն վրայ սիրտը ան-
հանգստով մեամբ լցուած՝ քարայրին դուռը նստեր որխ-
րութեամբ այս տասիճանաւոր աւերջան երևոյթը կը դի-
տէլի : Ես միջոցին Յաւակ իրեն մօտենալով բաւ :
“Ո՞ւցր իմ, միթէ Վատուծոյ պյուհետև պիտի չարէ՞
զմեզ, իւր բոլոր պարգևները մի առ մի կը ջնջէ, արդեօք
արևադիմ պիտի ունշացընէ” :

— Ո՞ւ, զաւախ, պատասխանեց Ժենը վեճով, որչափ
որ մենք բարի և խոհեմ ըլլանք, աստուած միշտ պիտի
պիրէ զմեզ, երկրիս վրայ ինչ ո՞ր կայ՝ դիարեղծական և
աղականացու է, միայն Աստուածային սերը յաւիտե-
նական կը մնայ : Բնութեան այս մերկացրեմը ուրիշ բան
չէ, բայց եթէ ձմեռուան մօտենալուն նքանը . ձմեռուան
վերջը գարունը կու գայ, այսպէս կը լսայ ամեն աարի
նոյնական ալ ամեն տառապանքներէն ետև ուրախութիւն-
ներ կը հետեւին, թէն մարդ չհաւատար երթ նեղու-
թեան մէջ կը գտնուի : Սակայն ես պիտի չյուսահա-
տիմ ու վատահ պիտի ըլլամ, և իմ վշաացս մէջ միայն
ապագայ երջանկութեան վրայ պիտի մտածեմ, որպէս զի
քեզի պիտո հանգիստ և ուրախ ըլլամ” :

Ժենը վեճով ձմեռուան պատրաստութիւնները կը
տեսներ . ամեն օր վայրի խնձորներ, տանձեր, կաղիններ,
սալորներ, և վերջապէս ինչ ուտելի պտուղներ որ գանելը
կը ժողվեր . ասկէ զատ՝ Յաւակին օդնութեամբը բաւա-
կան արմաններ կը հաներ, և եղնիկին համար չոր խստեր
կը ամբարել : Բայց կերակուքէն աւելի իւր հաղուստը կը

մասձեր, իւր միակ զգեստը այնչափ տարիներէ ՚ի վեր գիշեր ցորենկ հագնելով պատառ պատառ եղած էր, լաւվ քարայրին դուռը նստած կապերտները փուշելով և խոտի թելերով իրար կը կացըներ, բայց անօդուտ աեղը Շատղ, կըսէր հառաշելով, որչափ երջանիկ պիտի ըլւլայի այսօր, եթէ ասեղ մը և քանի մը թել դերձան ունենային: Ինկերուժեան մեջ ապրող որչափ մարդիկ կան, որոնք Աստուածոյ անթիւ բարիքը կը վայելին, և ամենաին չեն մռածեղ, անոր չնորհակալ ըլւալու”:

Յաւակ անոր խորունկ արտօնվածինը աեանելով ըսաւ օր մը: “Մայր իմ, կը յիշեն, անցեալ օր եղագ ես կրհարյնեի քեզ թէ ինչո՞ւ մեր եղնիկը բուրդերը կը թափէ, պատասխանեցիր թէ Աստուած տարին երկու անգամ նոր զգեստ կու տայ անոր. ուրեմն, մայր իմ, ինչն կը յուսահասիս, բարի աստուած անշուշտ քեզ ալ նոր զգեստ մը պիտի տայ, քանզի անտարակոյս զքեզ մեր եպնիկն շատ աւելի կը սիրէ:

— Խրաւունք ունիս, պատասխանեց Ժենըվելի ժպակելով, պիտի եմ անհոդ ըլւալ. Աստուած մեր պիտիքը կը հոգայ, ան որ անասնոյ և ծագկանց նոր զգեստներ կուտայ, անշուշտ մեզ ալ պիտի տայ”:

Քանի մը օրին եռու՝ իւր որդւոյն պատուիրելով որ շըլայ թէ քարայրէն դոպս եղնէ, ծառէն կտրած խոզք փայտ մը պատ ձեռքը, կաթով լեցուն զդմումնը իւր պարանոցէն կախեց և հետի տեղեր գնաց որ ուստեղ պտղոց ուրիշ ծառեր գտնէ: Քարձր լեցան մը դադաթը հասնելով, ծառի մը տակ նսասաւ որ քիչ մը ոգի աղ-

նու, և քանի մը ումագ կաթ խմելով զովանայ: Յանկարծ սոսկալի դայլ մը տեսաւ, որ բերանը ոչխար մը առած լերան միա կողմէն վագելով կու գար. երբ Ժենըվելին մօտեցաւ, զայն տեսնելովն պէս՝ կանգ առաւ, և կայծակնացայտ ու կատաղի աշօք անոր կը նայէր. Ժենըվելին այնչափ սոսկաց որ սկսաւ դողալ. բայց խկոյն քաջալելուելով, իւր քովը զրած փայտը յափսուակեց. գայլին վրայ յարձակեցաւ, և անոր գլխում այնպէս սասափի հարուած մը իջեցուց. որ դալը շփոթեցաւ. ոչխարը բերանէն թռուց և մինչև լեցան ստորոտը վրայցաւ, ուսկից ոռուալով փախաւ: Ժենըվելին ոչխարին քովը ծնկան վրայ եկաւ, անոր բերանին մեջ քիչ մը կաթ թափեց, և աղխատեցաւ որ զայն կենդանացընէ. բայց խեղճ անասունը արդէն մեռեր էր,

Եյս անասունին երեւոթը Ժենըվելի մոաց մեջ խիստ ցաւագին խորհուրդներ արթնցուց: “Խուելջ ոչխար, ըսաւ, ուրին գուն իմ ծնած երջանիկ երկիրներս կը բնակեիր. երկար ատենէ ՚ի վեր այս պիրելի հայրենիքէս ամենելին քան մը տեսած և լսած չեն. ինչո՞ւ կենդանի քրայիր, ո՞չ, ի՞նչ ուրախութեամբ զքեզ պիտի մնուցանէի, և խնամեի, և ինչպէս զաւակս պիտի ուրախանալի զքեզ տեսնելով. կարելի է որ ամուսնոյս բազմաթիւ հօտերէն ըլլաս, և զուցե իսկ իմ ունեցած բաժինէն: Ո՞հ, Տէի! Աստուած, պոռաց անոր վրայ քննելով, ի՞նչ կը տեսնեմ, այս, այս ոչխարը մեր հասերուն մեջնէն է, ահա մեր հովիւներուն նշանը: Ո՞հ, ինչո՞ւ զուն կենդանի ըլլայիր, և ինչո՞ւ մարդկային ձայն մը չունենայիր որ ես քեզ

հարցընեի թէ ինչ կընէ իմ ամուսինս , արդեօք պատեշազմէն ետ դարձաւ . արդեօք իւր Ժէնըվլէվին վրայ տակաւին կը մտածէ՛ , և ինծի դէմ՝ սրտմտած է տակաւին , թէ իմ անմեղութիւնս ճանչցաւ : Եւաղ , այն այօօր առատութեան մէջ կապրի , ու ես այսօր առանձնութեան և թշուառութեան մէջ կը թաւալիմ”:

Յանկարծ միաքը խորհուպու մը ծագեցաւ : “Եւա սեղը սիրելի հայրենիքէն շատ հեռու պիտի ըլլայ , ըստ ինքնիրեն , եթէ ոչ այս գայլը պիտի չըրնար ոչխարը մինչեւ հոս քերել : Երդեօք առնում զաւակս հայրենիքս դառնամ” : Երկար ատեն մտածելով յորդ արտասաք կը թափէր , և իւր սիրու ուժգնութեամբ կը բարախէր . վերջապէս ըստաւ . “Ո՛չ , աւելի աղէկ է որ հոս կենամ . քանի մէծ երգում մը ըրած եմ , եթէ ըսեմ թէ վախէս ըրի այն երգումը , գարձեալ իրաւունք չէ որ ետ զայն դրժեմ : Եւ ով զիտէ կարելի է որ այս յանդուզն ընթացքով կեանքս աղաւող երկու անձանց մահուան պատճառ ըլլամ : Ո՛չ , ես հոս պիտի մնամ որչափ որ աստուած կամի : Եթէ Եստուածոյ կամքը զիս այս անապատէն դուրս հանել է օր մը քանի մը զթասիրտ անձանց քայլելը այն անբնակ կողմելը կ'առաջնօրդէ . աւելի աղէկ է թշուառութեան համելելը քան թէ իսիզաքեռնաւորել” :

Եյն ատեն գնաց աղբիպին եղերքէն կարծր և սուր իսեցի մը գտաւ , անով ոչխարին վրայի մորթը հանեց և աղբիւրին ջրով լուալին և արևուն չորցընելին եռու՝ իւր վրայ հագաւ , և իրիկումը ուշ ատեն ետ դարձաւ : Յա-

շակ հեռուեն զայն տեսնելուն պէս՝ անոր առջեւը զնաց և ուրախութենէն պոռաց . “Ո՛վր մնացիր , մայր իմ , զիս մէծ անհանգստութեան մէջ թողուցիր” : Բայց յանկարծ զարմացմամբ կանգ առաւ . վասն զի սովորէն և վրայի մորթէն զայն շանչնալով անմիջապէս երո քաշուեցաւ , որ քարայրին մէջ պահուի : Երբ իւր մօրը քաղցր ձայնը լսեց որ կըսէր . Այի վախնապ , սիրելի զաւակս , ես եմ :

— Դո՞ն ես , մայր իմ , պոռաց Յաւակ ետ դառնալով , օրհնեած ըլլայ աստուած . բայց ըսէ ինչ է այդ վրայինդ , հիմա ինծի պէս հապուած ես , այդ ըզգեստը ուրկից գտար :

— Իւարերարն Եստուած զրկեց ինձ այս զգեստը :

— Ես քեզ չըսի՞ , սիրելի մայր իմ , թէ Եստուած ձմեռուան համար քեզ նոր զգեստ մը պիտի տայ : Ի՞նչ հաստ և թաւուտ սպիտակ զգեստ մ'է այդ , յաւելցուց ձեռքովը շօղափելով , ստուգիւ Եստուածոյ մէկ պարզեան է այս” :

Եյս ըսելով քարայրին մէջ մոան , Յաւակ աման մը լեցուն կաթ , և պտուղներով լեցուն փոքր կողով մը քերաւ իւր մօրը : Եյն ատեն Ժէնըվլէն մի առ մի պատմեց անոր թէ ինչ կերպով այս զգեստը ձեռք ձկեր երւ :

Զմեուր սաստկանալով Ժէնըվլէն և Յաւակ պարտաւորեցան քարայրէն գուպտ չեղնեղ . միայն օղը — բաց զեղեցիկ օրերը ձորակին մէջ քիւ մը պտղաելու կ'ելնէին :

“Ոիրելի զաւակս , ըստաւ օր մը Ժէնըվլէն իւր որդւոյն պտրտած ատենին , Եստուածոյ մարդասիրութիւնը

և հայրական խնամքը ձմեռուան մեջ անգամամեն տեղ կրնանք տեսնել : Տես ինչպէս արել ձիւնին վրայ քաղցր լոյս մը կը տարածէ , իսր ծառապայթները զարկած ժամանակը կարծես թէ կարմիր , կապոյտ և կանանց կայծեր կ'արձակէ վրան : Խօհե ամեն ծառերը իրենց տերեւներէն մերիցած են , բայց լուսուած եղեմներուն տերեւները կանանց թաղողացած են , որպէս զի անսառին աւասունները պատսպարան մը կարենան դժոնել : Գի ծառայն խորհաներուն վրայ ձևեռուան խիստ եղանակին մեջ անգամ կապոյտ և թարմ մրգիկներ կը գտնուին , որպէս զի թաղողանները իրենց մնունդը գտնեն :

Ո՞եր աղբիպը ամենեին չսառիր , որպէս զի անոնք և մնաք կարենանք անկէ ջուր խոմել ջուրին բոլորիքը տեսակ մը ջրացին խստեց կ'աճին , որոնցով բազմաթիւ թաշնիկներ կը ծննանին : Լուսուած ամենաղթնդակ եղանակին մեջ անգամ իսր շնորհքը և բարսմիւնք իսր արարածոց չը յանցընէ :

Գիշ օգ և սաստիկ հոգ եղած օրեղը՝ Յաւակ քարայրին վրան առջև սերմեր և հաւատեր կը սփռէր , և տեսակ տեսակ թաջոաններ կը մերձնային հօն որ ուստե՛ն շատ անգամ ալ շոր խոտեր կը քնիր քարայրին վապր , ու այծեամները և նապաստակները անօժեցած վաղեղով հօն կուզային , և վերջապէս այս կենզանիները այլափի ընտանեցան : Մոր նապաստակները իսր ձեռքեն կու զային ուստեղու , և այծեամներուն հետ կը խաղար , կը ցատկիր և կը վապէր :

Չմեռուան երկար վիշերներ՝ Ա. Ե. Ս. Ս. Ե. Ա. մեծ անհանգույթին կը կրէր , քանզի Յաւակ առջի իրիկու-

նէն , կը քնանար , և ինքը առանձին մութ քարայրին մէջ նստած երկար ատեն արթուն կը կենար և շեր կրնար քնանալ . “Ո՞րչափ եղջանիկ պիտի ըլլայի , եթէ ճրագ մը , գեղեցիկ գիրը մը , և կամ կանեփ և իլ մը ռանենայի : Խօմ ծառաներէս ամենէն յետինը անգամ այսօր ինձմէ աւելի եղջանիկ է . անոնք ձմեռուան երկար զիշերները խիստ տաք սենելի մեջ կ'անցընեն , ճրագին լուսովը կը մանեն , և խօսակցուելեամբ ու ծիծադիւրով երկար իրիկունները վայրկեաններու պէս կ'անցընեն : ”

Բայց անմիջապէս իսր սիրուր առ լուսուած գոխելով , իսր արտուամ խորհուրդները կը մոռնայ . “Խնչպէս երջանիկ է մարդ որ լուսուածոյ կը հաւատայ և իսր յոյսը անոր վրայ կը դնէ : Առանց քեզի , ով լուսուած իմ , հիմա այս միջոցին մէկը պիտի ըլլայր , որուն հետ կարենայի խօսակցիլ : Առանց քեզի շատոնց ես յուսահատութենէ և տաղուկութենէ պիտի մեռնէի : Դուն միայն , ու երկնային չայր , կարող ես կենաց ամեն վիճակին մեջ քաղցր միսիթարութիւններ տալու” :



ՊԱՌԱՋ ՓՈ

ԺԵՆԴԻՆ ՀԵ-ԱՆԴ-ԱՆԱՅ :

ԺԵՆԴՐՎԻԵԼ և իւր որդին այսպէս վեցը տարի իրենց այրին մէջ անցուցին : Բայց եօթներորդ ձմեռուան մէջ կրած նեղուժիանին ամենը գերազանցեց : Յորդարատ ձիւն դարվէ լեռներն ու գաշտերը պատեղ, և կաղնիներուն ու ոփիներուն տմենէն ուժեղ ոստերն անգամ ձեան ծանրութենէն խորտակեցան :

Պարտպ տեղը ԺԵՆԴՐՎԻԵԼ քարարին մռաւքը ծառոց սոտերովը կը գոցեր և իւր որդացն հետ մամուային անկողնոյն մէջ կուղեր պատուպարուիլ, քանզի հիւսիսային հողմը սաստկութեամբ փլեղով՝ ձեան հատերը մինչեւ ներս կը տանէր, և անկողնոր թրծելով զայն կը սարեցրնէր, ու քարայրին որմերուն վրայ սառոցներ կը գոյացընէր : Խշնիկին բնական տաքուժիանը բառական չեր ալ այն պիսի սոսկալի ցուրտոր մեղմացընելու : Եղու էնները ցուրտէն նեղուելով կը պոռային, և դիշելները զայլերուն ոռնալու ձայները բոլոր անտառը կը հնչեցընէին :

ԺԵՆԴՐՎԻԵԼ անտանելի ցուրտին պատճառաւը և իւր որդացն հետ վայրի դազանաց կերակուր ըլլալու երկիւշէն ամբողջ գիշերներ աշքը չգոյած անցուց : Յաւակ

որ իւր Ճիղմ հասակէն խիստ կեանը մը անցունելու ու վոր եր՝ ցուրտին կը զիմանար և խիստ առողջ եր : Աակայն ԺԵՆԴՐՎԻԵԼ դքսական քնքուը իշխանուակին, որ խիստ փառաւոր պալատի մէջ խնամով մեծցած եր, ալ չեր զիմանար այն ցուրտ և խոնաւ քարայրին մէջ բնակելու . “Ո՞հ, ըստ սառած արտառուք թափողով, քիչ մը կրակ ունենայի, ուրիշ բան չեր տալուր առ այժմ : բայց այս լուսակին զատ՝ կարելի է որ ցուրտէն այս անսահման անապատին մէջ մեռնիմ : Աակայն, ով Տէր, թող քու կամքդ կատարուի, քու հրամանիք հնազանդ եմ” :

Խոր վարդագոյն քնքուշ դեմքը փոխուեր և մեռելատիպ գոյն մը առեր եր . իւր քաղը աչքերը կապիճներուն մէջ խոռոչելով իրենց փայլուութիւնը կորսրնցուցեր եին, ու ինքը այնչափ նիշարցեր եր ; որ զայն տեսնողը պիտի վախնար :

“Ո՞նչ ունիս, սիրելի մայր իմ, պռուաց Յաւակ տրտմութեամբ, բայրովին այլակերպ եւ եղեր :

— Այրելի զաւակս, պատասխանեց ԺԵՆԴՐՎԻԵԼ : Տառնը հիւանդ եմ և կազծեմ որ պիտի մեռնիմ :

— Պիտի մեռնիս, ի՞նչ ըստը է մեռնիլ . դուն ամենեին ատոր վրայօք բան մը չըսիր ինձ :

— Պիտի քնանամ ու մեկ մ'ալ պիտի չարթննամ և լոյն ատեն աշքս արթգակը պիտի չտեսնէ, ականջներս քու ձայնդ պիտի չըսեն, մարմինս պազ երկիւր վրայ անզդայ տարածուած պիտի մնայ, այն ատեն պիտի չկընամ ամենեին մէկ անդամս շարժել, և վերջապէս մարմինս պիտի վիտի և ‘ի հող դառնայ’ :

Ի՞ս խօսքերուն վրայ Յաւակ անոր պարանոցը փաթթուեցաւ, և միայն այս խօսքերը կրցաւ բերանէն հանել. “Ո՞ր մեռնիր, մայր իմ, մի՛ մեռնիր, կաղաշեմ:

— Ո՞ր լար, սիրասուն զաւակ, մեռնիը և չմեռնիք ձեռքս չե, այլ Լոտուած այնպէս կուզէ և կըլլայ:

— Դուն շսիր ինձ, մայր իմ, թէ Լոտուած բարի է, ի՞նչպէս կրնայ քեզ այսպիսի շարովթիւն մը ընել:

— Ո՞չ, սիրելի որդեռակ, Աստուած ինքը մշանջենաւոր ըլլալով, մեզ ալ մշանջենաւոր կեանք մը կու տայ: Ե՞ս խօսք այսպէս բայսատրեմ քեզ, կը յիշեն զգեստներս հինգած ըլլալուն համար վայայէս հանեցի . . . ու Լոտուած աւելի աշելը տուաւ ինձ, ահա նցյնպէս այս իմ մահկանացու մարմինս պիտի մերկանամ, որ հող պիտի դառնայ, ու ես չար Լոտուածոյ քով պիտի եղթամ. այս ատեն այս ողորմելի մարմնայս տեղ՝ ուրիշ աւելի գեղեցիկ մը պիտի տայ, այն, հոն, երկինքը ես երջանիկ պիտի ըլլամ, հոն ամենաեին պաղէն և հիւանդովթիւններէն պիտի շվախնամ, հոն ոչ լաց կայ և ոչ տառապանք, բայց եթէ յախունական ուրախովթիւն: Ենչ պէս որ գաղումը ձմեռէն գեղեցիկ է, այնպէս ալ երկինքը երկրտս գեղեցիկ է: Լուենէն զըւարիթ գարուուր երկնից հետ բաղշատելով՝ տիրուր և տրտուր գլուխի կրնանի: Բարի և առաքինի մարզը որ մը երկինքը պիտի ելնէ:

— Ո՞այր իմ, ես ալ հետոշ կուզամ, ու չեմ ուսզեր հոս զարենի զաղաներուն հետ միւակ մնալ. քանզի անոնց հետ խօսեցած ատեն՝ անսնք ինձ պատասխան չեն

տար, ես ալ կուզեմ այս մարմինս մերկանալ ու քեզի հետ մեռնիլ:

— Ո՞չ, սիրասուն որդեռակ, գուն տակապին պիտի ապրիս, բայց եթէ բարեպաշտ և տռաքինի մնաս, անշուշտ օր մը պիտի գաս զիս գտնես եղկինքը, քանզի գուն ալ օր մը պիտի մեռնիս: Բայց մտիկ ըրէ ուրիշ ինչ պիտի ըսեմ քեզ. եղբ տեսնես որ ալ չեմ խօսիր, շունչ պիտի ըստ քեզի, աչքս կը մարին, շրթունքս կը գունաւոին, և ձեռքերս պրկեալ և սառած կրմնան, եղեք օր ևս քովս կեցիր, այն ատեն մարմնոյս անտանելի հոտէն պիտի հասկընաս որ մեռած են. ուստի ձգէ այս անապատը ու դեպի ի արեւելեան կողմը ուղղակի գնաւ. երկու կամ երեք օր քալելեղ ետև՝ այս անտառին ծայրը պիտի հանիս, և մեծ քաղաք մը պիտի տեսնես, որու մեջ անթիւ մարդիկ կը քնակին:

— Ղնթիւ մարդիկ, պոռաց Յաւակ զարմանքով, ես կը կարծեի թէ այս աշխարհիս մարդկային արարածները մինակ մենք ենք, ինչու մինչև հիմա այդ բանը չըսիր ինձ: Ո՞չ, եթէ քալելու ոյժ ունենայիր, հիմա իսկոյն այն քաղաքը կ'եղթայինք:

— Լուսն, զաւակս . այն քաղաքին մարդիկն են, որովք զիս ալ զեկու ալ պիտի մեռցընեին, ու զմեզ վայրենի գաղաններուն մեջ այս անապատը աքսորեցին:

— Ուրեմն ես ալ չեմ ուզեր անոնց քով երթալ, ես կարծեի թէ անոնք ամենքնին ալ քեզի պէս բարի են, մայր իմ. միթէ այն մարդիկն ալ պիտի չմեռնին:

— Ե՞ս, աշխարհի վայ ամսն մարդ մահկանացու կ

— Ո՞հ, արդեօք չե՞ն գիտեր թէ օր մը իրենք աշ
պիտի մեռնին :

— Եյո, գիտեն, բայց իրենց ընթացքը չե՞ն ուղղեց
ու զեղխովթեամբ կ'ապրին : Երկիրը անոնց խիստ պատ-
ռական պատվաներ կու տայ, զորոնք այս անապատին մէջ
չե՞նք կրնար գտնել, խիստ ընտիր ըմպելիներ կը խմեն և
խիստ քաղցրահամ կերակուրներ կ'ուտեն, «Օռաշկանց» ա-
մեն գոյները ունեցող պատմուձաններ կը հագնին, ու
եղեւելի մարդիկ ասողի պէս վայլող ուրիշ թանկագին
զարդեր ալ ունին : Բնակովթիմնին այնշափ գեղեցիկ է,
որ չեմ կրնար բերանով պատմել : «Ճմեռուան մէջ իսկ
այնշափ աղեկ պատսպարուած են, որ ամեններն ցուրտ
չեն զգար, և գիշերները իրենց սենեակները օրուան պէս
կը լուսաւորեն : Բայց ասոնց մեծ մասը Աստուծոյ այս
ամեն, բարովթեանց համար ամեններն չեն մտածեր անոր
շնորհակալ ըլալու, ընդհակառակն զիրար կ'ատեն, ի-
րարու նեղութիւն կուտան, և իրարու հետ կը կոռին :
Քեւե գրեթէ ամեն օր իրենցմէ մեկը կը մեռնի, բայց
ողջ մնացողները ամեններն հօգերնին չեն ըներ, և ան-
կարգ ընթացքնին կը շարունակեն, կարծես թէ յաւի-
տեանս երկրի վրայ պիտի ապրին :

— Ուրեմն ստուգիւ չեմ ուզեր անոնց մէջ մտնել,
ըսաւ ջաւակ . այն մարդիկը ոչ միայն մեր անտառի
գայլերէն աւելի վատ են եղեր, այլ մեր եղնիկն ալ ան-
միտ, որ ամեններն մեր խօսքերը չհասկընար : Աերակուր-
նին իրենց ըլլայ, աւելի աղեկ կ'ընարեմ վայրենի անաս-
ոնց հետ ուտել, քանզի ասոնք բաց ՚ի գայլէն խաղաղու-

թեամբ կ'ապրին իրարու հետ, և հանդարտութեամբ խոտ
և տոռնեկ ուտեղով կը մնանին, այո, աւելի կ'ուզեմ գա-
զոնաց մէջ մնալ, քան թէ մարդոց քով երթալ :

— Եյու ամենապնի պէտք ես երթալ, անոնք քեզ
չարութիւն մը պիտի ընեն : Ո՞տիկ ըրէ ուրիշ ինչ պի-
տի ըսեմ . մինչև հիմա քու երկնային չօրդ վրայօք խօ-
սեր եփ, բայց դում երկրի վրայ ևս հայր մը ումիս, ինչ-
պէս որ զիս մայր ունեցար :

— Հայր մը ումիմ երկրի վրայ, պոռաց տղամ, ու-
րախովթեամբ, և ուր է հիմա, արդեօք ան ալ քեզի
պէս է, և չօր Աստուծոյ պէս անտեսանելի չե՞ :

— Եյո, սիրասուն զաւակ, ըսաւ մնյրը, դում զան
պիտի աեսնեն ու պիտի իսօնիս հետոը :

— Պիտի տեսնեմ ու պիտի խօսիմ հետու, բայց
բնշու ինքը չի գար զմեզ տեսնելու, և ինշու զմեղ ա-
ռանձին այս վայրի անապատին մէջ թողուցած է, ար-
դեօք ան ալ այն չար մարդիկներէն մէնին է :

— Ո՛չ, զաւակս, հայրդ բարի է, բայց չդիտեր որ
մենք այս անապատին մէջ կը բնավիճակ, և չդիտեր իսկ
որ տակաւին կենդանի ենք : Եյսպէս համոզուած է թէ
մենք սպաննուեցանք, քանզի մարդիկ սուստ խօսքերով
հաւտացուցին իրեն թէ ես խիստ յանցաւոր եմ :

— Մուտոը ի՞նչ կը նշանակէ, ընդուժեց Ցաւակ :

— Չեղածը կամ մարդուս մոքէն չանցածը խօսիլն
է . օրինակի համար՝ մարդիկ իրարու կ'ըսեն թէ զիրար
կը սիրեն, քանի որ զիրար կ'ատեն . ահա այս է սուստ
խօսիլը ,

- Ե՞նչպէս կըլլայ այդ բանը , ամեննին այդպիսի խորհուրդ մը եկած չէ միորս : Ո՞ւ , ինչ տարօրինակ էակներ են եղեր մարդիկ :

- Ե՞ցապէս ուղթմն սուսով մը հայրդ խարեցին , քառ Ժամանակին աչքէն զաղած արտասուրը սրբելով , ու անոր հասկրցածին շափ իր պատմութիւնը անոր պատմելէն եռու՝ յաւելուց . “Տես այս ոռիկի մատնիս , զոր քու հայրդ տուած է ինձ :

- Հայրս տուած է քեզ , ո՞հ , տուք ուրիշն որ մատէն նայիմ զայն , մոր երկնային Նօր գեղեցիկ պարզենելոր , ինչպէս են արեր , լրասինը , ասոշելը և ծաղիկները արգիտ տեսած եմ , բայց երկնային հօրս պարզենելոր անտած չեմ տակածին” :

Ա. Քարմիկ մատնին մատէն հանելով անոր տուաւ . “Ո՞ւ , ինչ գեղեցիկ է , ըստ Յաւանի . Հայրս ասկէ ուրիշ գեղեցիկ բաներ ունի . և ինձ ալ պիտի տայ :

Ե՞նչուշտ , ըստ Ժամանակին մատնին վերստին մատոր դիմով , Երբ ես մեռնիմ , այս մատնին մատէս հանէ առ , քանզի մինչև մեռնելս կուղեմ պահել զայն , ինչպէս որ սերս և հաստարմութիւնս մինչև ցմահ պահնակի : Ի՞նոր վրայ ունեցած սերս այս մատնիին ոսկին պէս մարուր եր , և հաստարմութիւնս յաւիտենական , ինչպէս կը ցուցընէ մատնիս շրջանակը , որ ամեննեւին վերջ չունի , և ժամանակին միտնչենաւութիւնը կը նշանակի : Երբ մարդոց մէջ մոնիս , Արքամոնտ կոմը հարցուք , քանզի հայրդ այսպէս կը կոչովի : Աշաւ դիմացդ ելնող մարդոց որ զքեղ անոր քովը տանին , բայց

քու ով ըլլարդ և ի՞նչ պատճեռաւ կոմին քովը երթալ ուզելով մարդու մի ըսեր , մատնին ալ ամենեւին մեկու մի ցուցընէր հօրդ առջեւը եղնեղուք պէս՝ մատնին անոր տուր և ըսէ . Հայր իմ , մայրս այս մատնին քեզ կը զըկէ որ քու որդիրդ ըլլապս ճանձնաս : Վանի մը որ եւ միայն որ մեռաւ , և վերջին անդամ մ'ալ քեզ բարեւելով՝ կըսէ թէ ինքը անելող եր և քու ըրածիրդ համար , կը ներէ քեզ . երկրի վրայ զքեղ տեսնելող չկրնալով , յշու ունի վերստին երկինքը տեսնելու : Այս խնդրէ որ միշտ առարինի կեռնքը մը ունենաս , իրեն համար շատախս , և զիս իննամեռ : Եմեն բունէն ասեի , սիրելի զաւակս , մի մունապ իմ անմեղութիւնս և հաւատարմութիւնս ապացուցանելու անոր , ու ըսէ որ մինչև կեռնաց վերջնին շունքը նոյն բանը հաստատեցի քեզ և իւր անունը տալով մեռայ : Խոսք տուք ինձ , զաւակս , որ այս ամեն ըստաներս մի առ մի որիտի ըսեր իրեն , ու ապահովուր զայն որ մինչև մեռնիս զքեղ սիրածիր պէս զայն ալ կը սիրեի , պատուի նաև ինէ ինչ կեռնք անցուցինք այս անապատին մէջ , և ինչ վիճակի մէջ մեռայ : Եվաղաւեց զինքը որ իմ մարմինս առկէ վերցընէ ու իւր նպասհարցը զերեղմանին մէջ թաղել տայ , քանզի ես անոնց անարժան չեմ” :

“Ե՞ս խոսքն ալ ըսէմ որ մինչև հիմա չես գիտեր : Ես ալ քեզի պէս հայր և մայր ունիմ , եթէ անուք իմ գրեաղբութենէն եռաւ կեռուանի մնացին , աղաջէ հայրդ որ զքեղ անոնց քովը տանի . երբ անուք իրենց սիրելի բոռք տեսնեն , անսահման ուրախութիւն մը պետի ըզ-

զան, դժբաղովթեան եօթն տարինելու տառագանք-նին պիտի մողնան : Քանդի աւաղ, ըստ հեղեղի պէտ արտասուք թափելով, հայրս և մայրս ինձ համար շատ արտասուք թափած և խիստ վշուացած են : Ո՞հ, սիրելի ծնողքս, ո՞չափ կը փափաքի մեռնելս առաջ ձեր ակնածելի գերը վերստին տեսնելու , և դուք ոչ նուալ անձկանօք պիտի ցանկացիք զիս տեսնել եթէ կենդանի ըլլալս, դիտնայիք . բայց, ախսն : դուք իմ մարմնս երկար տատենէ ի վեր հետի անապատի մը մէջ հող գարձած կը կարծէք : Ինչ ուրախութիւն որ երկննքը վերստին զիրար պիտի տեսնենք , եթէ այս մսիթարութիւնը չունենացինք , այս աղևարհիս վրայ մեր կրած նեղութիւնները անտանելի պիտի ըլլային , և մենք խեղճ մարգկային արարածներ յուսահատութեան մէջ պիտի տառապէինք : Առաջան , խեղճ զաւակ , ու կը ցաւի՞ս որ քիչ ժամանակն մարդ պիտի կորսնցընես , Ե՛օտուած քեզ բարի հայր մը տալով՝ քու կորուսոգ պիտի մոռցընէ , սրբէ ուրեմն աշաց արտառուքը , հայրդ զքեզ խանդակաՅ-պիտի սիրէ , զորովանօք պիտի խուամէ , և բնաւ պիտի շնանձրանաց զքեզ զգուելէ ու իմ վրայօք հարցումները ընելի , և ամեն անդամ որ զքեզ տեսնէ պիտի չիկրնայ իւր վրալից և միանդամայն ուրախալից արտասուքը զափելու :

Ճ. էնըլիէլ լալին ոյժը հատնելով հեծկոտանօք խօսքը ընդմիջեց . և մամոային անկողնոյն վրայ երկնցաւ . սակայն այն առաջնան տկարացեր եղ որ երկար ատեն չկըցաւ բերանէն խօսք մը հանել :

Գ Լ Ո Ր Բ Հ Ը Ն

Յա-ակ է-ը հա-ասու-ը է-ը սոր է :

Զմեռուան սաստիկ ցոպտը սակաւ առ սակաւ մեղմանալով՝ քաղցը և ամոքախան օգելը սկսեր են : Երեւ քարայրին ներսու կը թափանցեմ , և զգալի տաքութիւն մը կը տարածէք . որմեղուան վրայ եղած սառոցները հալիր են . սակայն Ճ. էնըլիէլի հիւանդութիւնը օրէ օր կը ծանրանար , և իւր մահուան մօտենալը զգալով՝ պատեն կախուած խաչելութիւնը վար առաւ , իւր քովք զրաւ , ու մահուան պատրաստուեցաւ :

“Ե՛փասն , ըստ , ուրեմն զիկուած եմ մահուան անկողնոյս քով քահանապ մը ունենալու մսիթարութենին . որ ջեղմեռանդ իրախոյսներով քաջալերէ զիս , և իւր բարեկար ձեռօք կիւաց հայր տապ ինձ , որպէս զի զեկ չի յափառենակամութիւն . ընեղու մեծ ճանապարհորդութեանս մէջ զօրացընէ զիս : Բայց , ով Տէր , ու յափառենակամ քահանայապետ , զուն քովս նեղկայ ես , քանզի լքեալ և թախծեալ անձը առանձին չես թողուր , ու քեզի համար նեղութիւն կրող և հառաջող մարդոց օգնութեան կը հասնիս և կը զօրացընես զանոնք . ըստ որում ըսիր . Դրան առջև կեցած կը զարնեմ , թէ որ մէկը ձայնս լսելով բանայ ինձ , այն ատեն ներս պիտի մօնեմ ու բնակութիւնս հռմ պիտի հաստատեմ” :

Վայս խոսքերէն ետև՝ երկար ատեն լուսվեամբ աղօթք
ըրաւ ձեռքբը ջերմեաանդուժեամբ միացուցած և աչքը
զէկ ՚ի յերկիր խոնարհեցուցած :

Յաւակ կիշեր ցորեկ իւպ մօրը քովէն չեր զատուեր,
ու աղջափ տրոտում էր . որ ոչ ուտեղ կուզեր և ոչ
խմել : Խար ձեռքբն ելած ամեն ծառայուժեաները կը-
ներ, անոր . և խանդակամ սիրով կը խնամեր զան . թե-
ւերը հասածին շափ բարձրուժենետ խոնաւ զրմելով չք
մամուռով կը մաքրեր, որպեսզի զայլայ թե մղուած ջուրը
իւր հիանդ մօրը վրայ թափի : Ըատ անդամ ժայռերուն
վրայէն և ծառոց կածներուն բոլորափիքէն մամուռներ կը-
ժողվեր, որպեսզի իւպ մօրը աւելի չօր անկողին մը պատ-
րաստե :

Երբեմն աղբիւրէն զավ ջուպ կը բերեր և կըսեր ա-
նոր . “Օարափ շեն, մայր իմ, ջթունքդ թողորովին
շորեր են, և դուն հրատապ կը առջորիս” : Երբեմն մա-
քոպ կաթով լեցուն դդմաման մը կը բերեր ըսելով,
“իւմք քիչ մը, սիրելի մայր, պատուական կաթ ե, դեռ
հրմա կը եցի” : Եւ զայն խմորնելն ետև՝ լալով կը համ-
բուրեր, իւր մայրը և կըսեր . “Մայր իմ, սիրելի մայր,
ինչո՞ւ քու տեղդ ես հիանդանայի և շնուռներ” :

Վատու մը ձեհըվիել քաղցր, հանգիստ և երկար
քունետ մը ետև՝ հանդարառութեամբ արթնցաւ և սկսաւ
իւպ բոլորափը վիստուել փայտեայ փոքր խաշելութիւնը,
զոր սերտիւ գրկած պատկերով քունին մէջ կորսնցուցեր
եր : Յաւակ անոր ինչ ուզելը հասկընալով գուաւ և
տուաւ զայն անոր . “Բայց, մայր իմ, հարցուց, այս

փայտի կառըր ի՞նչ կըներ, որ միշտ ձեռքդ կը քամեն :
— Ոիրելի գաւակս, ես կարծեի թէ տակաւին շատ
պիափ ապրիմ, եթէ ոչ մինչև հրմա քեզ սորվեցուցած
եի : Բայց այսօր կը տեսնեմ որ կարեար բան մը ամե-
նախն երկարեղ պետք չէ եղիր : Վարդէն սորվեցուցի քեզ
թէ մեր եղինային : Հայրը Արդի մը անի, որ տեսն բա-
նի մէջ իրեն հաւատար է, բայց չկրցայ պատմել թէ ինչ
դործեր ըրաւ այս՝ Արդին մեղի համոր . ըստ որում աշ-
խարհն և մարդոցմէ հետի խոր առանձնութեան մէջ
քնակելուդ համար՝ շատ բաներ պիտի չկարենայիր հաս-
կընալ : Հիմա որ գիտես թէ երկրի վրայ մարդիկ կան,
և անսնց սովորութիւնները և բնութիւնները կըճանշնաս,
հիմտ օր մեռնիլ ինչ ըսել և գիտես, և օր Վատուծոյ
Արդայն պատմաթեան ամենին երեւելի մասերը քեզ
սորվեցընեմ . այն ատեն պիտի հասկընաս թէ այս ձեռքիս
փայտի կոռըր ինչ կը նշանակէ : Աւրեմն ուշադրութեամբ
մտիկ ըրէ և ընաւ մօրդ խոսքելը մի՛ մռամար :

“Մարդիկ ավխապհիս վրայ պնչափ վատթարացան
և այնչափ մոլորեցան որ աշխապհս ապականեցաւ և ա-
մենեկն արբայութեան արժանի մարդ չգտնուեցաւ Այն
ատեն երինային : Հայրը Երդին եղիկինքէն զրկեց, որպէս զի
զանոնք մալորաթենէ զարձրնետ և փրկութեան ճամբան
անոնց սորվեցընեւ :

“Յիսուս Քրիստոս Վատուծոյ Արդին, որ սրբու-
թեամբ, զորութեամբ և սիրով և օր Վատուծոյ հաւա-
տար է, աշխարհը եկաւ, մարմին առաւ ուժնաւ զրելէ

մերինին նման քարոզրի մը մէջ, ուր անբան անասուննելք ալ կային : Երբ մեծցաւ քիչ մը ժամանակ ևս մեր անտառն աւելի ահսուելի անապատի մը մէջ անցուց , ուր շարունակ աղօթք կըներ որ մարդիկ իւր քարոզութիւնները մտիկ ընեն և իրեն հաւատան :

“ Եյնուշեաւ սկսաւ քաղաքէ քաղաք պտղով և քարոզել որ եղկաւոր չայրը զի՞նքը մարդոց փրկութեան համար աշխարհք զգկած է, թէ ամէն մարդիկ Վատուծոյ զաւահներն են և Վատուծոյ փառաց արժանի ըլլալու համար սկսոք է առաքինի ըլլալ, զՎատուծ սիրել, և մէկ զմէի շատել : Անոր խօսքելուս ականջ կը դնել . ըստ Յիսուս, չարսթենէ ետ կը կենայ և արդարութեան ծամբուն մեջ կը մանէ երկնից արքայութեան արժանի պիտի ըլլաց , ուր մշտնջենաւոր երջանկութիւն մը պիտի վայելիք . բայց ան որ ձայնի ականջ չդներ , ու ինձ չհետեւիք՝ որ մը դժոխք պիտի երթայ , որ սոսկալի և ան վերջ տառապանքներով լեցուն է :

“ Բայց մարդիկ չուղեցին Յիսուսի մաիկ ընել, և ոչ իսկ հաւատացին թէ երկնային չօր Արդին է և անոր կողմէն զրկուած : Վյն ատեն սկսաւ հրաշքներ դորձել » որ իւր Վատուծոյ Արդի ըլլալը ցուցընէ :

“ Վնդամ մը՝ կին մը ինձի պէս անանկ հիւանդ էր, որ բժիշկները չկրցան առողջացընել : Յիսուս անոր ձեռքէն բռնեց , այսպէս քու ձեռքդ բռնածիս սկս , և անմիջապէս կինը ուաք ելաւ , և առաջուանէ աւելի առողջ և առոյդ ելաւ :

“ Վնդամ մ’ալ քեզմէր քիչ մը աւելի մեծ տղայ մը

մեռաւ , որ մօրը մէկ հատիկ զաւակն էր, ինչպէս որ դուն իմ միամօր զաւակն ես , և մայրը սաստիկ կողքար չօր Վատուծոյ Արդին անոր լացերուն դթալով՝ քաղցրութեամբ մը ըստա . “ Մի լազ , կին դու ” , և անծնչացեալ մարմնոյն դառնալով, Ելիր , ըստա , և դիակը նոյն վայր գինին կինդանացաւ , ոոր եղու և իւր մօրը քովը գնաց :

“ Վար նման շատ հրաշքներ ալ զործեց . կոյրելուն աչքը բայցաւ , բորոտնեղը , կաշելը , դիւահարնեղը բժը կեց . ջուպը գինիի գուխեց , քիչ մը հացով և երկու ձուկ մեծ բաղմութիւն մը կըսացցուց , և այլն :

“ Բայց մարդիկ դարձեալ չեին ուզեր հաւատալ ” որ Յիսուս Վատուծոյ Արդին է և անորմէ զրկուած , վերա ծառին անոր քարոզութիւններէն ձանձրակալով , որ ան դադար կը կրնէլ թէ իրենք չար մարդիկ են և պետք են մոլորութենէ դառնալ և քարի մարդիկ ըլլալ . այս բռնած խաչի ձեռվը իւած մը վնեցին , Վատուծոյ Արդոյն ձեռքելին ու ոսքելը անոր վրայ տարածեցին , փոշերու նման քելն ու ոսքելը անոր վրայ տարածեցին , փոշերու նման քայլութելուն բարիք ըստա էր :

— Ո՛չ, մարդիկ ինչպէս շարագործ են եղեր , պոտաց Յաւակ , ստողիւ կը սոսկացընեն զիս , բայց երկնային չայրը թողուց զանոնք որ ուզածնին ընեն , ինչո՞ւ իւր կայծակը և փայլակները անոնց վրայ շաեղացուց , ես անոր տեղու ըլլոյի , բոլորն ալ կը ստուեցընեի :

— Ո՛չ, սիրելի զաւակս , Արդին Վատուծոյ խաչին

վրայ անտանելի ցաւոց մեջ եղած առենն իսկ՝ չօր Աստուծմէ անոնց համար ներուն խնդրեց, և հոգին աւանդելու առեն ըստ։ “ Ն այդ իմ, ներէ անոնց. քանզի չե՞ն գիտեր քառածնին : Արդին առողջոց առեն մարզոց, նոյն իոհ զինքը մեռցրնոցներուն սիրոյն համար մեռաւ : Ե՞ս, որդեակա, եթէ Յիսուս շնունդի՝ բնու մեջը արքայութիւն պիտի շնունք մոնիշ, ոչ դուն և ոչ եւ, ուստին մեր սիրոյն համար իսկ Յիսուս իւկ ինունքը զոհեց”:

Օ դայուն մանուկը անշարժ նստած իրաւունքուն ու ուշագրոթեամբ մափկ էըներ և իւր վարդագոյն պատերէն վար արտասուց կաթիւներ եք հոսեին . քանզի առաջն անգամ (Յիսուսի պատմութիւնը լուղուն համար՝ իւր սիրոր և ավաղանց փողձկեր եր : Ո՞հ, բայի Յիսուս . կը սեր իւր արտասուցը մորթէ զգեստովը օրբերով, որ մեզի համար մեռար : Հսէ ինծի, մայր իմ, Յիսուս ալ հիմ երկինքն ե :

— Ե՞սյո, սիրելի զուտի, Յիսուսի անջնչացեալ մարմինը խռանին վար առնեղով, մեր քայլացրին նման զեւ յեղամանի մը մեջ զբին, ու մեծ քարով մը անոր զուոր զցոցեցին : Իսց երեք օրէն Յիսուս զերեզմանէն յարութիւն առաւ ու իւր սակաւաթիւ հաւատացեալներան երեցաւ և ըստ . “ Ո՞ի վոռանաք ինձ համար ես կ'երթամ չօրս քովը ձեղի համար տեղ պատրաստեց : Խմ բորոր ձեղ պատուիրածներս կատարեցէք, և մի՛ վահինքը քանզի ես ձեր մեջն եմ մինչև աշխարհին վերջը : Ա. Ե ըստով օրհնեց զանոնիք և անոնց աճաց առջեւը երկինք համբարձաւ ու անեցեւ ոյթ եղաւ :

— Մինչեւ հիմա զմեղ կը յիշէ՞ արդեոք . դիտէ՞ որ մենք այս անապատին մեջ կը քնակինք, և պիտի կարենանք օր մը տեսնել զնոքը երկինքը :

— Ենցուշու, որդեակա, զմեղ ամեն տեղ կը տեսնէ, և ուր որ ըլլանք՝ մեր քովն է, ան կըսիրէ զմեզ, կը խնամէ, մեր սիրար բարի զդացու մներօվ կը լցունէ, և կօգնէ զմեղ բազիք զործեղու : Այրեղի զաւակու, դուն ալճիւ, խոհեմ և բազի ազաց մ'ես, ու քու բարի վարքովդ ինձ մեծ մխիթարովմիւներ տուփիր . բայց կատարեալ բարի ըլլալու համար այգչափը բաւական չէ . պէտք ես բազիք զործեղ, Սսուուծմէ ետքը քու . նմանդ սիրել, և մեղք չզործել : Պէտք ես ամեն վայրկեան ջանալ որ անոր արժանի ըլլաս և անոր նմանիս . նայէ եթէ մարդիկ զքեղ սպաննել ու զեխն, զուն անոնց համար բարեխոսութիւն պիտի ընելիս, ինչպէս ըստ Արքին Սսուուծմ . վասն զի հիմա ըսիր որ եթէ կարենայի՞ ամենքն ալ պիտի սպաննելիք, կը տեսնես որ Սսուուծոց Արքուոյն շափարի և սիրելի ըլլալու համար որշափ զոհորթիւն ըշնելու է : Ե՞սյու ամենայինիւ եթէ կ'ուզենք Անոր և երկնայինն ։ օր հաճնիկ և օր մը երկնից պարզութեան արժանանալ, պէտք ենք Յիսուսի պէտ բազի և մարդասէր ըլլալ . որուն համար ինչը աշխարհք եկաւ և խաջին վրայ մեռաւ :

“ Հսիս զբարութեամբ պիտի համերնաս թէ ինչուն ոյս վիքու իսացը ձեռ քս քաներ եմ . այս նպանը Յիսուսի յիշատակին է, որ մեր սիրոյն համար շարջարածեցաւ և մեռաւ խաջին վրայ, և կը յիշեցնէ մեզ որ երկինք արքայութիւնը մտնելու համար մենք ալ վիրանովմեանց և

մահու ան տակեն անցնելու լիճակեալ ենք : Ահա այս
պատճառաւ մեծ յարդ կընծայենք այս նշանին որ այն-
չափ պարզ է երեւի :

“ Յախոս , սիրելի գաւակի , այս խաչեն զատ բան , մը
չընկիմ որ քեզ յիշառակ թողում , շարունակեց Ժէնը-
նիկ պատուաթորմ աչօք անոր եղեալ նացել . բայց
երբ մոռնին , սաւուցնող ձեռացս մեջէն քաշե առ և
սրահէ զայն , ու երբ մեծնաս և հարստանաս , մի ամրէն
զար մօրդ այս փոքրիկ յիշառակը բամկութեանդ ամենա-
փառաւոր տեղը լինելու , որպէս զի միշտ յիշեցնէ քեզ
թէ Յիսուս մեր սիրոյն համար անոր վրայ մեռաւ , և
թէ մայրդ ող այս վայրիթեանիս զայն կրկած կը մեռնի :
Այս քու նմաններդ , ամսոց բարիք ըրէ , և զոհե քու
անձդ անոնց օդապակար ըքալու համար : Անմեղ և անըստ-
գիւտ կեանք մը վարէ , և վերջապէս ասելի յարգէ քու
մօրդ քեզ թողուցած զուանքեայ ժառանգութիւնը քան
թէ այն անքաւ հարստութիւնները որ կրնայ հայրդ օր
մը քեզ թողով” :

Երաշափ երկար խօսելին եռու Ժէնըվիել սոխկուեւ
ցաւ վայրկեան մը հանգիւր :

“ Յատուած զքեզ անվտանգ հօրդ քովը տամի , կրոկ-
նեց մայրը քանի մը վայրկեան վերջը . քանզի թանձրա-
խիու և անապատ անտառներէ , տեպացեալ ժայռերու և
խորին դահավեմներու վրայէ պիտի տնցնիս , և զու :
խեղճ զաւակ . խիստ տկար ես այս երկար և վոաւգա-
ւոր ճանապարհորդութիւնը ընելու : Ասկայն կը յուսանի
որ Յատուած պիտի օգնէ քեզ երկարին հօրդ քովը եր-

թալու ինչպէս որ այս աշխարհիս աւելի վտանգաւոր
պանդիստութեանը մէջ կ'օգնէ մեզ իւր քովը հանելու :
Մի՛ մոռնար դդմամաննեղը կամով լեռնելու և հետո
առնելու , որպէս զի ճամբան ծարաւդ անցրենեւ , գաւա-
զան մ'ալ առ , որպէս զի ինքզինքով վայրի զավաներին
պաշտպանեւ : Անմեղ զաւակ , դրան ամսաբակոյս տկար եւ
բայց , Յատուած , որ այն սոսկալի գայլի գլուխը Ճախջա-
խելու կարողութիւն . տուաւ ինձ , անշուշա զքեզ ալ պի-
աի պաշտպանէ կատաղի գաղաններուն յարձակամին :
Ով որ իւր յայսը անոր վրայ կը դնէ՝ ամենեւին վախու-
նալու վտանգ մը չամփ” :

Երիկուան մեւթին հետ Ժէնըվիելի ակարութիւնն
ալ չափազանց աւելցաւ , իւր շնչառութիւնը այնչափ
գծուարացաւ . որ երեսը ցուրտ քրտինքով պատեզ : Յայն
ատեն վերսախին իւր ժամը ոդքը ժողվելով մամային ան-
կողնոյն վրայ նստաւ , իւր ցաւագին և հանդպատ նայ-
ուածքը իւր վրապալոց որդույն վրայ դպրուց . և սրամ-
շարժ ձայնով ըստաւանոր . “ Յաւակ , ծնկան վրայ եկու որ
օրհնեմ զքեզ ինչպէս որ իմ մայրս զիս օրհնեց իւր մեռ-
նելու ատենը : Կարծեմ որ վերջն վայրկեան հասած ե՞ :

Ողորմելի զաւակը հեծկլտանօք ծնկան վրայ եկու .
խորին տիխութեամբ . նկարուած դէմքը զեկ ի՛ զետինը
խոնահեցուց , իւր փոքրիկ դողդոջուն ձեռ քեզը միացրուց
և ջերմեռանդութեամբ վեր վերցուց . Ժէնըվիել ձեռքը
տղուն զիսուն վրայ դրաւ և սրամշարժ ձայնով ըստաւ ,
այս տուծոյ օրհնութիւնը վրադ ըլլայ , սիրելի զաւակս .
Յիսուս Քրիստոս միշտ հետզ ըլլայ , և ոգին Սուրբ

առաջնորդել քեզ ու Հնորհը լեցրնել զքեղ, որպես զի առաքինի մարդ մը ըլլաս, եղբեք մեղաց մեջ չեյնաս, և ես կարող ըլլամ որ մը զքեղ եռինքը տեսնել”:

Վայնուհետեւ իւր գրիացը մեջ առաւ զայն, մայրական գգուանոր համբուրեց և յաւելցուց . “Ոիրեղի զաւակս, եթէ մարդոց մեջ մոնես, անոնց մեջ շատ գեշ օրինափիեղ պիոի տեանես, չըլլայ որ անոնց նմանիս, և մոլոթեանց մեջ իյնաս : Եթբ պատայ և հարստութեանց համախ, չըլլայ որ անոնց սին փառքերը քու ողբրմելի մօրդ յիշատակը մուցրնել տան քեզ : Յաւակ, թէ որ մոռաւաս խանդադառնքս, մայրական արտասուրս և կենաց վերջին կտորին վրայ եղող մօր մը խօսքեցը, ու մոլի մարդ մը ըլլաս, ու, յաւիտեանս իրարմեապիսի գլասուինք միւս աշխարհին մեջ . կ'աղաւեց, որդեակս, որ քու առաքինութիւնդ և բարեպաշտութիւնդ միշտ պահես” :

Աւելիթել չերցաւ խօսքը աւելի յառաջ տամիլ, ու իւր ցաւոց անկողայն վրայ իյնալով տէքը կոցեց. . . . : Յաւակ շեղ դիտեր թէ արդեօք մայրը մեռած եր թէ կրքնանար : Վայր քովը ծունք զրած կոպար և հեծկլուանօք անդադար ալօմք կ'ըներ . “Ո՛վ Տեր, կ'ըսել, Վասուած իմ բարերար, մի՛ թողուր որ մայրս մեռնի . ու Յիսուս Քրիստոս, կը պաշտառիմ քեզ՝ արթնցուր զան նորէն” :



Պ Ա Ռ Ո Ւ Ծ Ք Փ Բ Ք .

Սիէնամոնք էսմոն էղն ուսքնապը : — Առաջ Ճանաչելով
անձնութիւնը էը խոսքովանի :

Առօյի ամբաստանութեան վրայ Ոիկիսմնան կոմոք
իւր դիկաստրգիւր մարկութենես յաղթուեղով՝ Ժանը կեկիլի
դատապարտութիւնը ստորագրելեն և դրկեղեն եռու՝ սիր-
տը կարեվելու խոցուած մտատանջութեամբ իւր վրանը
քաշուելու եր : Եպ զինակից Ո՛վալֆ ասպետը այն միջու-
ցին բանակին քանի մը մղոն հետի կը գանուելու : Ե զար-
ձին՝ Ոիկիսմնանի վրանը մոտաւ որ իւր աիրոջը առողջու-
թեան վիճակն իմանայ :

Առմոք այն ատեն բրոյր եղածները պատմեց անոր,
ծերուախ և հաւատարիմ ասպետը գունառելով՝ աշալա-
կեց . “Ո՛վ սիրելի խիսանս, ի՞նչ ըսէիր . իմ սպիտակ
հեղացս վրայ կ'եղդնուա՛մ որ կինդ անմեղ է : Վայսիսի
բարեկաստ և այնպիսի բարեկիլթ աղջկ մը այդպէս շու-
տով չմոլուիր, հաւատա ինձ, ես փորձով գիտեմ : Բայց
ներէ համարձակութեանս՝ այն Այլն նշանաւոր չարա-
գործ մ'է դիտեց որ շողզբորդութեամբք վստահութիւնդ
շահեց կարող եղած է, բայց հաճէ հաւատալ իմ այն
խօսքիս որ շատ անգամ քեզ համարձակուելու եմ կրկնե-
լու . Վայն որ շողզբորդութիւն կ'ընէ և միշտ քեզ ի-

բառունք կուտայ՝ քու թջնամիդ է, իւր պրտէն կ'անարս
գե զքեզ և միայն թար մասմաւոր օղուար կը փնտոէ ։
Բայց այն որ քեզ տհամելի երեւելէն չվախնալով ճշ-
մարիար կը խօսի՝ քու բարեկամը է ։ Ուստի մտիկ ըրէ-
ինձ, սիրելի իշխանս, ածապարէ խսկոյն տուած անխո-
ւեմ վճիրգ ետք կոշելու ։ Այլ երկնաւոր Ըստուած, ի՞նչ-
պէս բարկութենէն սխալեցաւ մեր բարեմիտ իշխանը։ Շ-
մենայետին հպատակներէն մէկը առանց զատաստանի դա-
տապարտած ատենդ՝ կը մտածէր թէ ի՞նչ մեծ մեղք-
գործեցիր, և ի՞նչպէս առանց հարցուիսաք ընելու առա-
քինի կինդ դատապարտեցիր։ Եթի պիտի կարենաս բար-
կութիւնք սանձեղը ։ «Բանի՞ անգամ բարկութեանդ-
համար զղջացած ես. բայց այս անգամ կը վախնամ որ-
սոսկալի դժբաղդութիւն մը չպատճառէ»։

Կոմը իւր սխալմունքը ճանչցաւ անխումութեամբ.
ածապարելուն համար, սակայն տակաւին կը տարակամեր.
թէ իւր Ժենըվիէվ կի՞նը յանցաւոր եր թէ իւր մտե-
րիմ Այլըն. լստ որում այս տեսուչին երեն զրած նա-
մակը այնպիսի սուտերով շտկուած էր, և խորամանկ նա-
մակարերը իւր ճարպիկ խօսքերովը նամակին պարունա-
կութեանը այնպիսի հաստատութիւն կու տար, որ նա-
խանձու իշխանը իւր բարկութենէն բազորովին յափշտա-
կուեցաւ։ Էյսու ամենայնիւ իւր մտերիմ Առւլֆին յոր-
դորներէն շարժեալ նոյն վայրկենին երկրորդ սուրհանդակ
մը զըկեց Այլօյին. հրամայելով որ մինչեւ իւր դալը Ժե-
նըվիէվ կոմուհայն շդպչէ, այլ զայն իւր բնակութեան
մէջ պահէ առանց անոր ամենամեթէ նեղութիւն մը

տուլու, և առանց որ և է-կերպիւ զըկանք մը ընելու ։
Իւր ամենէն ընտիր չին սուրհանդակին տուաւ, և հրա-
մայեց որ կարելի եղածին չափ շուտով ճամբայ ելնէ,
և եթ դռամար մը խոստանալով տնոր՝ եթէ ժամանակին
իւր բերդը հասնի, և անկէ համելի պատաժան մը բերէ։

Ո՞ինչև սուրհանգակին դառնար կոմը մտատանջու-
թեան մէջ կը տառապէր։ Իւր երեւակայութեան մէջ
երրեմն Ժենըվիէվ անմեղ կերեւր իրեն, և ժամ մը
եւորը՝ «Վ՞նչնար է, կըսէր, որ Այլո իմ այնպի ե-
զարիտիքս վայելելէն ետև՝ այսպիսի սոսկալի կերպով զիս
խարելու համարձակի»։ Եյս անտանելի անստուդութիւնը
անդադար կը տանջէր զինքը, ու որը անգամ մը իւր
մտերիմ Առվլիք կը շըկել որ ճամբուն վըայ նայի թէ
արդեօք պատգամանորը եւս կը դառնայ, ու ամբողջ զի-
շելներ վայրկեան մը չկրցաւ աչքը գոցել։

Ա երջապէս պատգամաւորը հաստ և իմացուց որ
Ժենըվիէվ և իւր որդին գիշեր ժամանակ անտառը տա-
րուելով կոմսին հրամանին համեմատ զազտնի զիստուեր
են։ Եյս քստմենելի գումժին վըայ՝ կոմը զրեթէ ոգես-
պառ և վհատեալ գետինը ինկաւ։ Առվլիք սրտի անձ-
կութենէն գուրս ելաւ վրանէն, և կոմսին տապետները,
որոնք իրենց իշխանին վրանին տռնչեր ամփոփուեր են,
տնօրէն Այլօն անիծեցին և երդում ըրին որ ի զարձին
զայն ապահնեն։

Կոմը պատերազմին մէջ վերը մը ընդունած ըլլալով՝
ամբողջ տարի մը հիւանդ մնաց. վասն զի իւր մտատանջու-
թիւլը և խղճի տագնապը իւր առողջութիւնը կուշա-

ցլնեին : Երբ քիչ մը առողջացաւ , մեկնելու հրաման խնդրեց : Արասինացիք բողոքովին ցաղթուած ըլլալով , և անոնց կողմէն երկիւազ մը չմնալով , թագաւորը հրամայեց անոր որ մեհին : Կոմսը իւր հասատարիմ Առշին և իւր քաջ պատերազմականաց ընկերութեամբը խոկոյն ձամբայ ելաւ դեպի ի իւր երկրը :

Երիկով , մը ուշ ատեն իւր կոմսութեան առաջին զիւղակը հանելով , անոր բարի բնակիները , այր , կին և տղայք իրենց խրձիթներէն դուրս ելան և զայն գիմառուեցին բարձրաձայն լալով . “ Բարի եկար , բարի և յարգելի իջևան , ոհ , սուկալ գեքաղութիւն , մը պատահցաւ : Տիւր է մեր բարի կոմսուեին , անիծեալ ըլլաց այն անօրէն Ազոլուն ” : Կոմսը ձիէն իջնելով , մարդասիրութեամբ բոլոր ժողովուրդը բարեկց , և իւր բացակայութեան ժամանակ իւր կոմսութեան մէջ պատահածներուն վրայ հարցուփորձ ընելով տեղեկութիւն տեացաւ անոնցմէ , Յ մենքը միաբերան Ա Եպովիեկի առաքինութիւնները կը գովեին և Ազոլոյի շարութիւննելը կը պատմեին :

Կոմսը տրամութեամբ և միրուր վերաւորեալ իւր ձամբան շարունակեց , որպէս զի նշյա իրիկունք իւր պալատը հասնի : Երբ ցերդին մօսերը հասաւ , բոլոր պատուհաննեղից խիստ լուսաւորեալ տեսաւ , և առելի մօս տեսնալով , երածշառութեան ձայնեց լսեց : Կոմս ու վորութեան այս իրիկունք ալ իւր բարեկամաց փառաւոր խնջոյք մը ըրեր եր , քանի կը կարծէր որ կոմսը իւր ընդուած վերքէն պիտի շաղատի . արդեն ինքզինքը բոլոր կոմսութեան իշխանը կը համարէր , և այսպէս շարունակ

պասամբով և փառաւոր խնջոյքով իւր խղճմուանքը խըցքընել կուզեր :

Կոմսը իւր պատերազմականաց հետ բերդին դռնակը հասնելով՝ հրամայեց որ փողերը հնչեցրնեն : Տերդին պահապանը իւր փողովը պատասխանեց , Այլո և բոլոր կոնականները անմիջապէս ոտք ելան և “ Այսու եկաւ , կոմսը եկաւ ” պռուալու ձայները բոլոր բերգը հնչեցոցին : Այլո , որ ամենեին կոմսին այսպէս յանկարծ գալո չեր յուսաք , ածապարելով վայ իջաւ , և խոնարհութեամբ կոմսին ասպատանը բռնելու եկաւ . քանզի կոմսը գեղ ձիուն վրային իջած չեր :

Միկամնուած երկար և սուր նայուածքով մար նայեցաւ սուանց անոր խօսք մը խօսելու , և Այլո զունատեալ և երկիւաղալոց գերեւէր իւր յանցաւը իւր դատաւորին առջեւ : Իւր խղճին խռովութիւնը բոլոր գիմացը վայ յայտնի կերեւէր , և անսույց ու երերուն քայլերով իւր տիրոջը առջեւէն կը քալէր , ու իւր գոզդոջուն և ուժաթափ ձեռքովը բռնած ադտանակով սանդուղը երլուսաւորեր որ կոմսը վեր ենէ :

Միկամնուած բոլոր բերդին մէջ անկարգութիւն մը , խառնասկութիւն մը և վատնութիւն մը տեսաւ , ամեն կողմ օտար գեմքերու հանդիպեցաւ . Հին ծառաներէն միայն քանի մը հոգի նեցեր են , որոնք արտասուալց աշօք կոմսին դաշնուոր շնորհաւորեցին : Օ հնուց սրաքը մօնելով իւր սաղաւարու և սուրը սեղանին վրայ դրաւ , և բոլոր բանակները Ազոլէն խնդրեց , ու իւր հաւատացիմ Առաջին տուաւ , հրամայելով անոր որ բերդին

